ՍՈՎՈՐԱԿԱՆ ՀԱՄԱՐԸ 5 Կ. ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ № 4

Հասցէն՝ Աստրախան, „ԲԱՆԲԵՐ“-ի խմբագրութիւն։
Հեռախօս № 182.

Астрахань,
Редакція „БАНБЕРЪ“.

Astrakhan
Redaction „BANBER“.
Телефонъ 182.

ԲԱՆԲԵՐ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱՍՏՐԱԽԱՆ, ԿԻՐԱԿԻ, ՅՈՒԼԻՍ 12. 1915 Թ.

...անս պայմանները.
...ակիցներին և թղթակիցներին խնդրւում ...ը գրել պարզ, մաքուր և թղթի առաջին ...
...գրութիւնը իրեն է վերապահում ուղղագրութեան ձևը, փոփոխութիւնները, բացի պայմանաւորւած յօդւածներից։

Վերադարձնւում են բանաստեղծականներն ու այն յօդւածները, որոնք երեք թերթից աւելի ծաւալ ունեն։

Հասցէները փոխելու համար պէտք է ուղարկել 45 կ. վճար մարկաներով։

Բաժանորդները, թերթը չստանալու դէպքում, պարտաւոր են տեղեկացնել, հակառակ դէպքում խմբագրութիւնս իրեն պատասխանատու չէ համարում։

ԴՐՈՒԹԻՒՆԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

Ժամանակակից Թիւրքիան դարձեալ շարունակում է միայն նոյն արեան, աւերածութեան և մարդկային նախճիրների կլասիկ երկիրը։ Էնվեր-Թէլաաթեան քլիկը չը բաւականանալով փաթթելու ապարազդ Թիւրքիայի ժողովրդեան վզին ներկայ պատերազմը, նրա գալիք ահաւոր հետեւանքներով. այժմ էլ կրած պարտութիւնների ամբողջ գոյնըսթը աշխատում է թափել երկրի քրիստոնեայ տարրի, առաւելապէս հայերի և յոյների վրայ, կամենալով այդ կերպ գրգռել պատերազմից դժգոհ թիւրք տարրի ֆանատիկոսութիւնը և եղած անյաջողութիւնները վերագրել երկրի քրիստոնեայ տարրի անլօյալ ընթացքին և պատամբական-անջատական ձգտումներին։ Սկսած քրիստոնեաների, մանաւորապէս հայերի, հալածանքը օրէցօր աւելի ընդարձակ ծաւալ է ստանում։ Մահմեդական յետամնաց և անգիտակից ամբոխը մոռանալով երկրի օրհասական ցնցումները և հոգեվարք վիճակը, ոտել է կառավարութեան կոյր գործիքի դերում և եռանդուն կերպով իրագործում նրա դժոխային ծրագիրները։ Պօլսից տրւած հրամանի համաձայն, արդէն ամբողջ յանւածալ Թիւրքիայում ծայր են առել հայկական ջարդերը։ Կոտորւում, ոչնչացւում են ամբողջ գաւառներ, շրջաններ — Մուշ, Բիթլիս, Էրզրում, Սեբաստիա, Տիգրանակերտ, Կիլիկիա և այլն, իսկ այն վայրերում, ուր անհնար է կոտորածը, կառավարութիւնը դուրս է քշում քրիստոնեայ տարրը երկրի սահմաններից, ինչպէս այդ տեղի է ունենում Եւրոպական Թիւրքիայում և Միջերկրականի ափական ափերում, որտեղերի յոյն և հայ ազգաբնակութիւնը ստիպւած եղաւ ամեն ինչ թողնելով փախչել, ապաստան գտնելով Բուլղարիայում և Յունաստանում։ Մասսայական ջարդերից զատ երիտասարդ թիւրք կառավարութիւնը մի առանձին թափով ձեռնարկել է հայ ժողովրդի մտաւոր-հոգեկան ներշնչումների աղբիւրի — առաջադէմ ինտելիգենցիայի — ոչնչացմանը։ Հալածանք է սկսւած երկրի մէջ, իրեն իսկ կառավարութեան կողմից լեգալիզացիայի ենթարկւած, քաղաքական կուսակցութիւնների և նրանց անդամների դէմ։ Փակեցին այդ կուսակցութիւնները իրենց բոլոր ճիւղերով, թերթերով, ակումբներով։ Հարիւրաւոր գաղափարական, ինտելիգենտ, ժողովրդի ազատագրութեան գործին անձնւէր, անգուգական գործիչներ ձերբակալւելով զինւորական դատարանին յանձնւեցին, մեղադրւելով պետութեան դէմ կազմած դաւադրութեան մէջ։ Դրանց մի մասը, աւելի բաղդաւորներները, քշւեցին երկրի խուլ անկիւնները, իբրև աքսորականներ, իսկ միւսները իրենց նահատակի մահը գտան կախաղանների վրայ։ Յունիսի 2-ին Պօլսում երիտասարդ թիւրքերի ձեռքով կախաղան բարձրացւեցին 20 հնչակեաններ, ընտրւած իրաւագուրկ տարրի անդուգական մարտիկներ։ Եւ դահիճի անարգ գերը իրենց վրայ են վերցրել այն մարդիկ, որոնք դեռ երեկ յանդգնում էին խօսել ազատութեան, հաւասարութեան, եղբայրութեան անունից։

Այո, տիրում է Թիւրքիայում կոտորածը, ախթաղանը. սակայն դրանք չեն կարող փրկել երիտասարդ Թիւրքերի գոյութիւնը և թերևս այնքան էլ հեռու չէ Թիւրքիոյ բաղկացուցիչ ժողովրդների ազատագրման օրը և ազատութեան համար նահատակւող հայ մարտիկները բանտի գնդաններից, տանջարաններից, կախաղանից ողջունում են գալիք այդ երջանիկ օրը կոչելով՝

— Ave Libertas, morituri te salutant.



ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Աստրախանում հայ գրաշար չը լինելու և տեխնիկական մի քանի անյարմարութիւնների պատճառով, անկարող եղանք «Բանբեր»ը կանոնաւոր կերպով ժամանակին լոյս ընծայել։

Խմբագրութիւնս ամեն միջոցներ ձեռք է առել վերացնելու այդ անյարմարութիւնները և ապահովելու առաջիկայում թերթի կանոնաւոր հրատարակութիւնը։

ՆԱՄԱԿ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻՑ

(Սեփական թղթակից)

Սօֆիա 7 յունիս

Տխուր գիպւած մը, ցաւալի հանգիպում մը, որ ես ստիպւած եմ իմ առաջին աշխատակցութիւնս „Բանբեր“-ի մէջ ընել այն պարագային, երբ Կ. Պօլսոյ հրապարակներուն վրայ կախաղան բարձրացուած են քսան անվեհեր հնչակեաններ։

Յունիսի 2-ի առաւօտեան ժամը 3½-ին բաց պատերազմական ատեանի կողմէ գրւած որոշման մը քսան քաջեր, ամենն ալ հին յեղափոխականներ կախաղան են հանուած ի զոհացումն ժետն թիւրք արիւնարբու կրքերուն։

Ահա ինչ տեսակ պաշտօնական յայտարարութիւն է հրատարակած Կ. Պօլսոյ ընդհանուր հրամանատարութիւնը։

„Պատերազմական Ատեանի առջև և ի ներկայութեան տեղի ունեցած դատավարութեամբ հաստատուած ըլլալով որ անկախ և ինքնօրէն Հայաստան մը կազմելու համար եղեռնափորձեր կազմակերպած, ստորները Օսմանեան դէմ գրգռելու եղանակով ձեռնարկած են կայսերական երկրամասերէն մաս մը Օսմ. կառավարութենէն անջատելու և այս նպատակաւ օտար երկիրներու զանազան կողմերը գաղտնի և յայտնի համաժողովներ գումարելով մէկանց հրատարակութիւններ, գրգռութիւններ և թղթակցութիւններ ըրած են, պատժ. Քաղաքային օրէնքին 54-երորդ յօդուածին յաւելուածական մասին համաձայն Պոլսոյ Պատերազմական Ատեանին կողմէ մահուան դատապարտուեցան հետեւալ անձերը:

1) Հնչակեան կուսակցութեան ազդեցիկ անդամներէն և ռուսահպատակ Փարամազ անունով ծանօթ, Մաթէոս Սարգիսեան և կամ Թոգոմթագի Համբարձում Գրիգոր:

2) Վանեցի Յակոբ Դագաղեան որդի Մուրադեանի, այլ անուամբ Մուրադ Զաքարեան:

3) Կիրասոնցի մշակ Մինաս, որդի Գաբրիէլ Քէչէճեանի, այլ անունով Սամսոնցի Սաքը Խաչիկ կամ Մինաս:

4) Պիթլիսցի դերձակ Սմբատ, որդի Վարդան Գըլըճեանի, այլ անունով Ակատեր Պետրոս:

5) Զմշկածագցի ոսկերիչ Վահան Պոյաճեան, այլ անունով Ռուբէն որդի Մինաս Կարապետեանի:

6) Խարբերդցի տոքթոր Պետրոս, որդի Պէննէ Թորոս Թորոսեանի:

7) Վաճառական Արմենակ որդի Համբարձումի:

8) Կօշկակար Աբրահամ, որդի Սահպան Մուրատեանի:

9) Կալուածական միջնորդ Աբարկիրցի Արամ, որդի Կարապետ Աչըքպաշեանի:

10) Բժշկական վարժարանի 3-րդ լսարանի ուսանողներէն Հրանտ որդի Աբրահամ Ճեղավեանի:

11) Սարաճհանէ վրան շինող գործաւոր Շ. Գարահիսարցի Գարեգին որդի Առաքել Պօղոսեանի:

12) Ակնցի ոսկերիչ Պօղոս, որդի Միքայէլ Պօղոսեանի:

13) Բիլիսի Հնչակեան Մասնաճիւղին նախագահ Յակոբ, որդի Ղազար Պասմաճեանի:

14) Նոյն տեղին Մասնաճիւղին անդամներէն և հայոց վարժարանի ուսուցիչներէն Թովմաս, որդի Վահան Թովմասեանի:

15) Կօշկակար Երեմիա, որդի Կիպրիանոս Մաթոսեանի:

16) Խարբերդի Հնչակեան Մասնաճիւղին անդամներէն Մկրտիչ որդի Յովհաննէս Երէցեանի:

17) Զինւորական վարժարանի յաճախող, սպայութեան թեկնածու, Վանցի Բեղամ, որդի Կարապետ Վանիկեանի*)

18) Պարտիզակի հայոց վարժարանին ուսուցիչներէն Երուանդ Եանավէրտ որդի Յովհաննէս Թոփուզեանի:

19) Կեսարիոյ Հնչակեան Մասնաճիւղի անդամներէն և վարժարանի ուսուցիչներէն Յովհաննէս որդի Սահպան Քէրղազարեանի:

20) Սրճագործ Դանիէլ, որդի Գրիգոր Պօյաճեանի:

Տրուած վճիռը կայսերական իրադէով վաւերացուած ըլլալով յիշեալները յունիս 2-ին առաւօտեան ժամը 3½-ին ատենները ըստ սովորութեան կանչուած կրօնաւորին միջոցաւ կրօնական արարողութիւնը կատարել է, կտակնին գրել է և բժշկական քննութեան ենթարկուել է հոդ. կախուեցան Պատերազմական նախարարութեան առջև գտնուող հրապարակի կառափնարանին:

Անկէ զատ նոյն կուսակցութեան կենտրոնին պետ Սապահ-Գիւլեան և անդամներէն Վարազդատ ի բացակայութեան մահուան դատապարտուած ըլլալով անոնց նկատմամբ ձեռնարկուած է օրէնքին պահանջումները գործադրելու:

Ահա Պոլսոյ ընդհ. հրամանատարութեան պաշտօնական յայտարարութիւնը, զոր հրատարակուած է կախուելէն օր մը վերջ:

Այս լուրը շանթահարեց բոլոր պուլկարահայութիւնը և գաղտնի նման խուեցաւ բովանդակ հայութեան սրտի մէջ: Գրիչի մէկ հարուածով, ժեռն թուրք զազաններու կըքերուն հագեցման համար, անմիջական ճնով կախաղան կը հանուին 20 քաջեր, մարտիկներ, առանց ոև է քննութեան և կամ դատավարութեան:

Ժեռն թուրք բռիրը ամբողջութեամբ իր բոլոր ուշադրութիւնը դարձուցած է բնաջինջ ընել հայը, ինչով որ կարելի է: Բանտ, աքսոր, կոտորած, թալան և ահա կախաղանն ալ:

Այս ինքնին շանթահարիչ ու սարսափեցուցիչ լուրը եկաւ յուզեց պուլկարահայոց սրտերը: Ի մասնաւորի Սոֆիայի մէջ հոգեհանգիստ կատարուեցաւ, որմէ յետոյ սգահանդէսին խօսեցան պատուելի Յ. Շահուկեանեան. Հնչակեան ներկայացուցիչ Մկրտիչ Ներսէսեան և ի վերջոյ դաշնակցական գործիչ Գ. Օչանեան: Ներկայ էին սգահանդէսին Մակեդոնական գործիչներ և այժմեան պուլկար երեսփոխաններ Զանկոֆ, Լիափչէֆ և ուրիշներ, ինչպէս նաև Մակեդոնական Օփրըշինիյէի կողմէ մասնաւոր պատուիրակութիւն մը, որոնք եկած էին յանձին տեղւոյս Հնչակեան Մ—գին իրենց ներկայացուցած Մակեդոնական կազմակերպութեանց ցաւակցութիւնը յայտնել:

Ա. ԿԱՄՍԱՐԱԿԱՆ



ՎԱՆԻԿ

(Բեգամ Վանիկեան)

Ընդհանուր տառապանքի, վշտի, արեան այդ դառն օրերին, երբ չորս կողմը լսւում է տանջւող մարդկութեան հեծկլտանքը, լացը, արտասուքը, անզօր բողոքի յուսահատ ճիչը և օգնութիւն հայցող աղաղակները, որոնց կոշմարային ծանրութեան տակ ճմլւում, արիւնաքամ է լինում նոյնիսկ ամենաուժեղ մարդ-էակի սիրտը, այնուամենայնիւ չես կարողանում առանց ցնցումի և խոր կսկիծի նայել այն գաղափարական անձնուրաց գործիչներին, որոնք գրկած հանրամարդկային վեհագոյն իդէալների սրբազան դրօշակը պայքարելու ժամանակ դիտապաստ ընկնում են պարտականութեան դաշտում: Շատ չեն այդպիսիների թիւը, որով նրանց կորուստը աւելի ծանր և աւելի զգալի դառնում: Այդպիսի հազւագիւտ, գաղափարական, լուսաւոր դէմքերից մէկն էր Վանիկը, գաղափարի անպարտ զոհը, որը արիւնռուշտ թիւրք կառավարութեան կողմից յունիս 2-ին Պոլսում 19 այլ ընկերների հետ կախաղան հանուեց իբրև ապստամբ, յեղափոխական:

Բեգամ Վանիկեանը բնիկ վանեցի էր: Աւարտելով միջնակարգ կրթութիւնը նա մտնում է Պոլսոյ համալսարանի իրաւաբանական ֆակուլտետը: Ուսանողական միջավայրը, Պոլսոյ քաղաքական զեռուն կեանքը ու այնտեղ տիրող բուռն պայքարը չէին կարող խորապէս չազդել Վանիկի վրայ և նա նետւում է հասարակական գործունէութեան ասպարէզը վառ յոյսերով, սրտով ու մտքով փարած իր փայփայած գաղափարներին: Վանիկի անխոնջ ջանքերի շնորհիւ ծնունդ է առնում Ս. Դ. Հ. Ուսանողական Միութիւնը որը իբրև միակը տաճկահայ իրականութեան մէջ մի նոր թարմ, կենսունակ հոսանք մտցրեց Պոլսոյ թմրած հայ ուսանողութեան շրջանում և առիթ ընծայեց նոր Միութիւնների հրապարակ գալուն: Անդրանիկ Ուսանողական Միութեան հաստատումից յետոյ, Վանիկը մի քանի այլ գաղափարակից ուսանողների հետ ձեռնարկում է Միութեան օրգան «Կայծ» ամսաթերթի հրատարակութեան, որը մինչև վերջը շարունակեց միակ լուրջ, գիտական հանդէսը հայ մամուլի մէջ: Ս. Դ. Հ. Ուսանողական Միութիւնը, որի գործունէութիւնը սկզբնական շրջանում զուտ ակադեմիական բնաւորութիւն էր կրում, յետագայում, գլխաւորապէս Վանիկի ջանքերի շնորհիւ, աւելի մօտեցաւ կեանքին և նրա անդամները սկսեցին գործօն դեր կատարել կուսակցութեան մէջ: Արձակուրդներին Միութեան անդամները ցրւում էին գաւառները և դասախօսութիւնների, հրապարակային ժողովների միջոցով տարածում իրենց գաղափարները ժողովրդի մէջ, կազմակերպում աշակերտական Միութիւններ և կապում նրանց Պոլսոյ կենտրոնի հետ:

Երբ Պոլսում սկսեց հրատարակել „Նոր Աշխարհ" օրաթերթը, Վանիկը շտապեց ի սպաս դնել այդ հասարակական լուրջ օրգանին իր ամբողջ եռանդը, ուժը մտաւոր կարողութիւնը:

Հակառակ իր ուսանողական սուղ ազատ ժամերին նա միշտ գտնւում էր առաջին շարքերում, պանէշի վրայ, միշտ պատրաստ պայքարելու իր դաւանած գաղափարների յաղթանակի համար, կրելով միաժամանակ Ս. Դ. Հ. Ուսանողական Միութեան ղեկավարի և Միութեան օրգան „Կայծ"ի խմբագրի ծանր և պատասխանատու պաշտօնները:


Մօտ մէկ ու կէս տարի առաջ նա յաջողութեամբ աւարտեց համալսարանը և իր բովանդակ էութեամբ նուիրեց իր պաշտած գաղափարների ծառայութեանը:

Անցեալ տարի պատերազմից քիչ առաջ թիւրք կառավարութիւնը խուզարկեց և կնքեց "Կայծ"ի խմբագրատունը, իսկ թերթի ղեկավարներին, որոնց թւում նաև Վանիկին, բանտարկեց: Ազատուելով բանտից Վանիկը, որպէս զինւորական ծառայութեան ենթակայ, սկսուած պատերազմի պատճառով, ստիպուած է լինում մտնել զինւորական վարժարանը սպայութեան դասընթացքին հետևելու: Ճիշտ այդ ժամանակ թիւրք կառավարութիւնը կովկասեան ֆրոնտում իր ունեցած անյաջողութիւնները վերագրելով հայերի դաւաճանութեանը, Պոլսում և գաւառներում մի սոսկալի հալածանք սկսեց Հնչակեանների դէմ մեղադրելով նրանց ապստամբական—անջատական ձգտումների մէջ: Ձերբակալուեցին և զինւորական դատարանին յանձնուեցին բազմաթիւ հնչակեաններ, որոնց թւում նաև Վանիկը: Յունիսի 2-ին Պոլսում գծուծ թիւրքիայի արիւնարբու դահիճները-ժեռնթիւրքերը—կախաղան բարձրացրին ժողովրդական 20 անձնուէր գաղափարական մարտիկներ, որոնց թւում և Վանիկը, այդ շիտակ, ժողովրդանուէր գործիչը: Ընկեր Վանիկը իր ընկերների կողքին պարտականութեան դաշտում, զոհաբերեց իր ծաղիկ կեանքը մարդկային լուսագոյն իդէալների համար, իր արեան գծով հարթելով ուղին դէպի տանջւած ժողովրդի լուսաւոր ապագան:

Փառք և յարգանք անձնուէր գործիչ լուսաւոր յիշատակին:

Վ. Մ—ԵԱՆ

*) Վանիկ «Կայծ»ի խմբագիր, խրատարան:



ՊՕՐՈՒՉԻԿ ԳՐԻԳՈՐ ԱՒՇԱՐԵԱՆ

Յունիսի 24-ին, կռւի դաշտում, հերոսի մահով ընկել է հայկական կամաւորական 6-րդ գնդի առաջին գումարտակի հրամանատար պօրուչիկ Գրիգոր Աւշարեանը:

Հանգուցեալը ծնւել է 1891 թ. յուլիսի 17-ին: Աւարտելով Բագուի ռէալական դպրոցը նա զինւորական ծառայութիւնից յետոյ մտնում է Ղազանի զինւորական դպրոցը և 1914 թ. աւարտում է սպայի աստիճանով: Ուղարկւելով ռուս-գերմանական ռազմաճակատ, նա մասնակցում է մի շարք կռիւների և ցոյց տալիս աննման քաջութիւն և արժանանում Ս. Գէորգի ոսկէ սրի: Կռիւներից մէկում ստացած վէրքը ստիպում է նրան կարճ ժամանակով թողնել կռւի դաշտը, սակայն շուտով առողջանալով, նա շտապում է դէպի Կովկասեան ռազմաճակատը և ստանձնում հայկական կամաւորների 6-րդ գնդի առաջին գումարտակի հրամանատարութիւնը: Այդպիսով իրագործւեց նրա վաղուց փայփայած իղձը—ծառայել հայ ժողովրդի ազատագրման մեծ գործին: Շրջապատուած գաղափարական և անձնուէր ընկերներով նա դիմում է դէպի առաջաւոր դիրքերը և յունիսի 24-ի տաք ճակատամարտում երբ—ըստ վկայութեան գեներալ Բ. ի—6-րդ գունդը հանգուցեալի հրամանատարութեամբ ցոյց է տւել օրինակելի քաջութիւն և հերոսութիւն, պօրուչիկ Աւշարեանը ընկնում է հերոսի մահով պարտականութեան դաշտում, 24 տարեկան ծաղիկ հասակում:

Ընկեր Աւշարեանը, ժողովրդի ազատագրման քաջամարտիկ զինւորը, սակայն նրա լուսաւոր յիշատակը միշտ կենդանի կը մնայ իր ընկերների և հասարակութեան սրտերում:



ԳՐԻԳՈՐ ԱՒՇԱՐԵԱՆԻ ԹԱՂՈՒՄԸ ԲԱԳՈՒՈՒՄ

Երէկ, յուլիսի 2-ին ս. Լուսաւորչի եկեղեցում պատարագից յետոյ կայացաւ հայկական դրուժինայի 6-րդ բանակի հրամանատար պօրուչիկ Գ. Աւշարեանի յուղարկաւորութեան հանդէսը: Եկեղեցում խօսեց սրբազան առաջնորդ Կարապետ եպիսկոպոս՝ մեծարելով վեհ նպատակի համար անձնազոհութեան ոգին, որ ընդհանուր է մեր ժողովրդի համար. դուրսը խօսեցին Ամ. Հովսէփեան, Ա. Վարդանեան: Յուղարկաւորութեան հանդիսին ներկայ էին զօրականներ, զինւորական երաժշտախումբը և առատ բազմութիւն: Սգերթն ուղղուեց դէպի գերեզմանոց: Դիակի առջևից տանում էին մի քանի թանկարժէք պսակներ:

„Արև"

Բագու, 2 յուլիսի

Յուլիսի 2-ին, ժողովրդի խուռն բազմութեան ներկայութեամբ, տեղի ունեցաւ պատերազմի դաշտում ընկած՝ հայկական դրուժինայի քաջարի հրամանատար պօրուչիկ Գրիգոր Աւշարեանի թաղումը։

Դամբանական ճառեր խօսեցին թեմական առաջնորդ Կարապետ եպիսկոպոս, հանգուցեալի ընկերներ Սիմէօն Հովուեան, Աղեքսանդր Տէր-Վարդանեան, Ղազանճեան և Շաղանեան։

Սգերթին հետեւում էր նաև զինուորական երաժշտախումբը և հետևակ զօրք։

Դագաղի վրա դրված էին 15-ից աւելի պսակներ։

Հովուեան, Տէր Վարդանեան

ԿՈՏՈՐԱԾԸ ԽՆՈՒՍԻ ԳԱՒԱՌՈՒՄ

Վանի գրաւումից յետոյ, նահանջող թիւրք զօրքը, խուժանը և քրդերը դիմում են Մշոյ և Բուլանըխի գաւառները, ուր Մուսա Բէկի Համիտեանների հետ սկսում են անխնայ կոտորել և աւերել այդ գաւառների հայ գիւղերը։ Ապա անցնում են Խնուսի գաւառը և միացած Հէյդարցի, Միրզեցի և Ջիլանցի քիւրդ ցեղերի հետ, որոնց բնակավայրն է Խնուսը, յարձակւում են գաւառի 30-ի չափ զուտ հայաբնակ գիւղերը և սկսւում կոտորածը։ Խնուսի բազմամարդ գիւղերի՝ Խարաչօպան (800 տուն), Գոփանտուկ (300 տ.), Սարվորի (50 տ.), Խըրմաթոթլեայ (150 տ.), Գոբալ (200 տ.) բնակիչները միանալով դիմում են ինքնապաշտպանութեան և 2 օր… թուան դիմադրութիւնից յետոյ, ռազմամթերքի սպառման պատճառով ստիպւած են լինում փախչել։ Կռուողներից հազիւ կարողանում են ազատուել 50—60 հոգի, որոնք գալով Մանազկերտ իրենց զէնքերով անձնատուր են լինում ռուս բանակին։ Այսօր անդ եկաւ յիշեալ կռուողներից Խարաչօբան գիւղացի Եղիշէ Զաքարեանը, որը շնորհիւ իր վաղեմի ծանօթ Հասնանցի քուրդ Բախոյի մեծ կրճանք տալով կարողացել էր ազատել իր կեանքը։

…ականատես Զաքարեանի ցուցմունքի համաձայն անգթաբար սպանել… Խարաչօբան գիւղում յայտնի վաճառական և կալուածատէր Իսրայէլ…եանը և իր 2 եղբայրները, Խալեցի Յոհանը, իր կինը և փոքրիկ զաւակը, Յովհաննէս Մխիթարեանը իր 2 որդիներով, Տիգրան Ասօեանը, ուսուցիչ Վահէն, Վառօ Սարօյեանը իր որդի Հրանտը և մայրը Վարդանոյշ, Աւագ Ամրդատեանը, Սարգիս Գիւրջեանը, որդիները—Վահան և Արտաշէս, Մաչեարեան երեք եղբայր …րօն, Ալօն և Մուրադ, Գ. Աղօյեան, …իկեան, Ամրեան և իր 2 որդիները, Ս. Պօղոսեան, Գ. Խուրշուդեան։ …ուլ գիւղի քհնյ Տէր Աւետիսը իր 3 որդիներով և այլն։ Բոլոր արուներին ինչպէս նաև պառաւ կանանց և երեխաներին գազանաբար մորթել են սոսկալի տանջանքների ենթարկելուց յետոյ, իսկ ջահել կանանց և աղջիկներին տարել են իրենց հետ։ Շատ քչերին է յաջողուել փախչել լեռները և ազատել իրենց կեանքը։ Հրոյ և սրոյ ճարակ դարձած Խնուսի հայութեան փշրանքները այսօր հաւաքւած են Մանազկերտ, Մերկ, Անօթեան և օրուայ հացի կարօտ։ Եւ չը կայ ոչ մի օգնութիւն գոնէ մի քիչ թեթեւացնելու այդ դժբաղդների ողբալի դրութիւնը։

ԽՆՈՒՍՑԻ ՅԱԿՈՎԲ

Կարս

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՌԱԶՄԱԲԵՄԻՑ

(Սեփական թղթակցից),

Հայկական 6-րդ գնդի առաջին յաղթանակը

I

Վերջապէս ստեղծեց առիթ ցոյց տալ հասարակութեան 6-րդ հայկական գնդի քաջութիւնը և ինչպէս զինուորական իշխանութիւնները արտայայտեցին—նրա գերմարդկային ճիգերը—ընդդէմ 15—20 անգամ աւելի թշնամու։

Երբ դեռ ևս 6-րդ հայկական գունդը նոր էր կազմւում, կային շրջաններ, խմբակներ և նոյն իսկ հասարակական կարծիքներ, որ այդ գունդը զրկելով անկախ Թիֆլիսի ազգային կոչւող Բիւրոյից—գոյութիւն չի կարող ունենալ—չարդարացան այդ „բարի" ցանկութիւնները։ 6-րդ բանակի I գունդը կազմւած կանոնաւոր վաշտերով, հարիւրեակներով և յիսնեակներով սպառազինւած բոլոր յարմարութիւններով ուղղեց պատերազմի դաշտը ցոյց տալու իր կենսունակութիւնն ու քաջութիւնը։

Յունիս 18-ին, համաձայն ստացւած կարգադրութեան, առաւօտեան ժամը 3-ին, երբ արշալոյսի շողերը դեռ ևս չէր շառագունել երկնակամարը, գնդի II-րդ վաշտի քաջերը ղեկավարութեամբ վաշտապետ Հ.-ի, որպէս գիշերային ուրւականներ, լռին մեծ զգուշութեամբ էին կազմում Շ. Դ.-ի հովտում, շրջապատելով թշնամուն 3 կողմից։ Սողալով ինչպէս գետնի խլուրդներ հայ մարտիկները մօտ 3 վերստ մօտեցան թշնամուն, որը չըկասկածելով մօտալուտ վտանգը և փիդայիների ներկայութիւնը խռմփացնում էր Ա. գիւղում, թողնելով յառաջապահներ շրջակայ լեռների և գիւղերի վրայ։ Բացւեց արշալոյսը և համաձայն տրւած ազդանշանի հարիւրաւոր մարտիկների բերանից դուրս թռած յախուռն ուռան դղրդացրեց ամբողջ Բասենի դաշտը։ Հրացանների ճարճատումը, անհնկարող ուռանների արձագանքները և բռնաթաթախ թիւրք զօրքի ու քիւրդ ձիաւորների սարսափի աղաղակները միախառնելով իրար ստեղծել էին մի դժոխք, ուր ոչ հրաման, ոչ վաշտապետի սուլիչը և ոչ էլ վիրաւորների ճիչերը չէին լսւում։

Քաջամարտիկ 6-րդ գնդի II-րդ վաշտի առիւծները, ինչպէս լափող լաւայ, առաջ էին ընթանում ջարդելով տրորելով և գետնին հաւասարեցնելով ճանապարհը փակող քրդական ձիաւորներին և թրքական յառաջապահներին։

Փախաւ թշնամին… դարերով կուտւած վրէժխնդրութեան լաւան այրեց, ոչնչացրեց քիւրդ օրդաներին մինչև Ա. գիւղը, որը նոյնպէս թողեց թշնամին ամրանալով գիւղի յետևը գտնւող լեռներում։ Թիւրքերը տեսնելով որ անկարող են դիմադրել հայ քաջերի գրոհին և ստիպւած են յանձնել Ա. գիւղը, որը ռազմական տեսակէտից շնորհիւ բնական ամրութիւնների մեծ դեր է խաղում, բերեցին 2 գնդակացիր և 2 լեռնային թնդանօթներ Հասան Ղալայից, որը վերոյիշեալ վայրից 6—7 ժամուայ հեռաւորութեան վրայ է գտնւում։ Հայ քաջերը ամրանալով գիւղի աջ ու գտնւած աջ և ձախ բարձրավանդակներում սկսեցին պաշտպանուել կարկուտի պէս տեղացող թնդանօթների շրապնելներից և գնդակացիրներից։ Կէս օրուայ մօտ հասաւ և մեր թնդանօթը, որը լինելով աւելի մեծ և ուժեղ, սկսեց դղրդացնել լեռները։ Հրաման ստացւեց ինչ գնով էլ լինի վերցնել գիւղը, քշել թշնամուն և ամրանալ նրա դիրքերում։ Հրամանի կատարումը յանձնւեց վաշտապետ Հ.-ին, որը վերցնելով իր հետ 20 կամաւորներ, սողալով մօտեցաւ թշնամուն մօտ 500 քայլ և ապա յաղթական ուռայով յարձակւեց նրանց դիրքերի վրայ։ Քաջ վաշտապետի յետևից օգնութեան հասաւ իր վաշտի 4-րդ հարիւրակը, որոնք միահամուռ հրացանազարկերով դուրս քշեցին վերջնականապէս թշնամուն և տիրացան նրանց դիրքերին։ Թշնամին յետ նահանջեց 5 վերստ և ամրացաւ Ճ. և Դ. գիւղերում տանելով իր հետ բազմաթիւ վիրաւորներ։ Երեկոյեան դէմ Ա. գիւղը պատկանում էր արդէն 6-րդ գնդին և թշնամին յետ էր նահանջել իր առաջուայ դիրքերից 9 վերստ թողնելով կռւի դաշտում ձիեր, հրացաններ և բազմաթիւ սպանւածներ։ Կռիւը դադարեց երեկոյեան ժամը 7-ին, որից յետոյ պարզւեց մեր սպանւածների և վիրաւորների քանակը։ Սպանւած են 3 հոգի, վիրաւորել են 22 հոգի, որոնց մէջ նաև վաշտապետ Հ., որը սակայն վէրքերը կապելով կրկին անցել է իր վաշտի գլուխը։ Ամենից շատ վիրաւորներ ունեց II-րդ վաշտը նախ որովհետև նա էր յարձակւում և երկրորդ թշնամու ամբողջ ոյժը և գնդակացիրները գործում էր նրա դէմ։ Վաշտապետ Հ.-ն արժանացել է Կովկասեան զօրաբանակի հրամանատարի շնորհակալութեան—երկու վէրք ունենալուց յետոյ շարքերում մնալու համար և ներկայացւած է իր քաջութեան և Ա. գիւղը վերցնելու համար Ս. Գէորգի խաչի։

(Կշարունակւի)

ԿԱՄԱՒՈՐ ԱՐԱՄ

ՑՈՒՑԱԿ

Հայկական 6-րդ գնդի վիրաւորների և սպանւածների

(յունիս 18-ի կռւում)

1) Հայկ Բժշկեան աջ թևից ծաւց շարքերում, 2) Տիխոն Սոլովիօվ, ձախ թևից, 3) Աղեքսանդր Շևչենկօ, ձախ թևից, 4) Խաչիկ Հովաճեան, աջ թևից, 5) Բարթող Տէրտէրեան ձախ թևից, 6) Առաքելեան աջ թևից, 7) Համբեակ Ղազարեան, սպանւած, 8) Ղազար Սաֆարեան, գլխից, թեթև, 9) Ֆիլիպոս Հովիւեան աջ ոտքից, 10) Մկրտիչ Յովհաննիսեան—սպանւած, 11) Պետրոս Մարտիրոսեան ազդրից, 12) Յոլիայ Աղաբէգեան, կողքից, 13) Թորոս Պետրոսեան, կողքից, 14) Գրիգոր Պօղոսեան, ձախ ուսից, 15) Սեդրակ Տէրտէրեան, աջ ոտքից, 16) Մակար Սիմոնեանց, գլխից, 17) Խաչատուր Ներսէսեան, սպանւած, 18) Աբրահամ Յարութիւնեան, ձախ թևից, 19) Տրդատ Խաչատրեան աջ ոտքից, 20) Խաչիկ Սարիբէգեան, 21) Մելքոն Գրիգորեան, 22) Համազասպ Պալիկեան, 23) Սանասար Աւետիսեան, 24) Վասիլիյ Կարին, բոլորն էլ թեթև վիրաւորւածներ։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՊԱԳԱՆ

(Ֆրանսիական „La Dépêche" թերթից*)

Որչափով որ Ռուսական բանակները առաջանում են Հայաստանում յաջողապէս գրաւելով նորանոր քաղաքներ, առաջ է գալիս այն հարցը ինչ է լինելու Տաճկահայաստանի ապագայ վիճակը։

Կասկած չը կայ որ Հայկական վիլայէթները մի անգամ արդէն ազատուելով տաճկական լծից, երբէք չեն համաձայնի կրկին ընկնել նախկին, անչափ ատելի իշխանութեան տակ և հաշտութեան ժամին, պետութիւնները գնահատելով նրանց օգտակարութիւնը պէտք է ապահովեն նրանց գոյութիւնը Ասիայում այս կամ այն ձևի տակ… Պէտք է որոշել նրանց ապագան տալով մի վերջնական ազգային ստատուտ։

Վաղուց է որ հայերը ձգտում են իրենց ամբողջական անկախութեանը, բայց թւում է, որ այսօր նրանք կը հասկանան, ինչքան այդ երազի իրականացումը կը լինէր դժւար և մինչև անգամ վտանգաւոր, որովհետև Հայաստանը ամբողջովին դառնալով անկախ չէր ունենայ ոչ նիւթական ոյժ և ոչ էլ ֆինանսական անհրաժեշտ աղբիւրներ ապահովելու իր սահմանների պաշտպանութիւնը։

Նրա ուզածն է իր գոյութեան ապահովութիւնը, իր լեզւի և տրադիցիաների ազատութիւնը և հայկական ցեղի ազգային վերակենդանումը։

Հայ Հնչակեան կուսակցութիւնը իր հրատարակած մի յայտարարութեան մէջ հետևեալ կերպով է արտայայտւում «Մենք կարծում ենք լինել հայ ազգի միահամուռ ցանկութիւնների հաւատարիմ արտայայտիչը պահանջելով Հայաստանի ինքնավարութիւնը դաշնակից պետութիւնների հովանաւորութեան տակ»։

Շատ ճիշտ և արդարացի ցանկութիւն է դա։ Ի հարկէ դաշնակից պետութիւնները կունենան այդտեղ իրենց լիազօր Ռուսաստանին, որովհետև հաւանական չէ որ Ֆրանսիան, Անգլիան կամ Իտալիան ցանկանային ուղղակի միջամտել այդ հարցի կանոնաւորման մէջ։ Ի վերջոյ տաճկահայ ժողովրդի վերաբերմունքը դէպի Ռուսաստանը շատ սրտագին է։ Այդ նրանք էին որ ճանապարհ պատրաստելով հեշտացրին ռուսական բանակի յառաջխաղացումը և Վանում հաստատուելը։

Հայերը ապստամբելով դուրս քշեցին տաճիկներին այդ քաղաքից, որը նոյնպէս մեծ բան է։

Արդէն մի քանի տարուց ի վեր Ռուսաստանը Կովկասի հայաշատ մասերում մտցրած է մի բարեացակամ և լիբերալ ռէժիմ։ Նրան հարկաւոր է միայն այդ լիբերալ ռէժիմը աւելի ընդլայնացնել և տարածել Փոքր Ասիոյ հայկական վիլայէթներում, ուր և կգտնէ այդ նոր նահանգների ժողովրդի մէջ աւելի անկեղծ և ջերմ օրինապահութիւն։

G. V.

*) „La Dépêche" թերթը ֆրանսիական դեմոկրատիայի ամենաազդեցիկ օրգաններից մէկն է, որը հրատարակւում է միաժամանակ Փարիզում և Տուլուզում յայտնի Շարլ Վէլէյի խմբագրութեամբ։

Ծանոթ. խմբ.

ԶՕՐԱՀԱՒԱՔ

Մռայլ աչքերս յառած պատկերիդ
Աղօթում էի ընկած ծնկաչոք
Ճմլում էր հոգիս յուշերը մոր-մոր
Աղօթում էի վշտով անամոք։

«Պատերազմ» հնչեց ժամը սարսափի
Կոչ էր խենթացած, զէնքի-արիւնի…
Պատերազմ, ահիր աղէտ ամէնի,
Ցնցւեցի… և ես աղօթում էի…

Մինչեռ իմ շուրջը… ընկած ծնկաչոք
Լուռ աղօթեցի պատկերիդ առաջ,
Իմ հոգուն տիրեց մի անդուլ թողոք
Եւ չ'աղօթեցի պատկերիդ առաջ…

ՍՈՒՍԱՆ

Տփխիս

ՄԿՐՏՈՒՄԵԱՆ Թ. ՅԻՇԱՏԱԿԻՆ

Ներկայ այս ծանր խրակն կեանքում
Անթիւ չարքերով գիտակից ոյժեր
Մաշում են... հանգչում...
Շատ էր վաղաժամ, տեսնել մարանչող
Հերոսի դէմքին — ժպիտը սառած...
չոգերը մարած.
Շատ էր վաղաժամ ազատագրման —
Երգախոյզ մարդկանց — վառ աչքերը
տեսնել մթագնած....
Սակայն՝ գիտում ենք մութ ուղիների
Բարձունքն հեռաւոր
Ցայթուն կրակն է երեւում այնտեղ
Լուսեղ — անհաւոր...
Եւր գիտակցութեամբ մութ ուղիներով գնանք մտնենք.
Այն մեծ պատգամին, կեանքի փառքին ջերմ ողջոյններ տանք

ՍՈՒՍԱՆ

Տփխիս.



ԲԱԼԿԱՆԵԱՆ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

(Մեր սեփական թղթակցէն)

Բուքրէշ 17—30 յունիս 1915 թ.

Համաեւրոպական պատերազմը անհայտ թողնում է մի տարուայ շրջան եւ տակաւին Բալկանեան չէզոք պետութիւնները ցոյց չեն տալիս ոչ մի շարժում ոչ մի տրամադրութիւն՝ մասնակցելու այս ընդհանուր պատերազմին.

Բուլղարիան յանձին ապքի Ռադոսլավօվի դահլիճին, դեռ համառօրէն պնդում, վերակրկնում է չէզոքութիւնը, որովհետեւ առանց իր դրացի պետութիւններին՝ մասնաւորապէս Ռումինիայի, Սերբիայի եւ Յունաստանին հետ կարգադրելու իր խնդիրները՝ որը ծագում է 1912—13 թ պալքանեան պատերազմին, չէ կարող այս կամ այն կողմը թեքուել, պատերազմի մասնակցել, որովհետեւ, ոչ մի շահ է նկատում իր ազգային իդեալները իրականացնելու տեսակէտից. Անհաւանկ նրա վարչական գլխաւոր եւ առաջին ազդակը. Երկրորդական, երրորդական պատճառներն են իրա ռազմական վիճակը, ֆինանսական դրութիւնը եւ այլն, իսկ ժողովրդի ցանկութեան մասին չէ կարելի խօսել, որովհետեւ, կառավարութեան ուղղութիւնը քննադատող մէն մի հրատարակութիւն, անպայման գրաքննւում է ենթարկւում եւ կամ ջնջւում արգելւում.

Բուլղարիայում մեծ թիւ են կազմում համաձայնութեան պետութիւնների համակիրները. Նրանք պահանջում են կառավարութիւնից մէկ կողմ թողնել չէզոքութիւնը ու գործակցել քառեակ համաձայնութեան պետութիւններին՝ կողք կողքի թիւրք բռնապետական դաշնակցութեան դէմ պատերազմ յայտարարելով. Նրանք իրապէս համոզուած են, որ բուլղար բանակը Նախկինից աւելի մեծ թափով հաղթանակներ պիտի անէ, որից յետոյ թէ Բուլղարիան ստանալու է ամբողջ Թրակիան՝ Միդիա-Էնոսագիծը եւ թէ Մակեդոնիայից մի բաժին. Սրանք բոլորը երաշխաւորում են համաձայնութեան պետութիւնները եւ իրականացնելու են այն ատեն, երբ դաշնակիցները գրաւում են Կ. Պօլիսն.

Անցեալ շաբաթուան ընթացքում, վարչապետ Ռադոսլավօֆը թերանալ պատասխանը տեղ տանելն տանձին այցելելով քառեակ պետութեանց ներկայացուցիչներին՝ այս վերջին արուած ծանուցագրի առթիւ. Թւում է որ Սոֆիայի կառավարութիւնը սկզբունքով ընդունել է բանակցութիւնների մէջ մտնել քառեակ համաձայնութեան պետութիւնների հետ. սա մի աչքի ընկնող երեւոյթ է. Մնում է միայն առաջնորդուել երկրի շահերով ու այնպէս համաձայնութեան գալ դաշնակիցների հետ. Դա ժողովրդի ցանկութիւնն է, որին տեղի տալու է կառավարութիւնը.

ՇՄԱՒՈՆ ՊԱՐՈՅՐ



ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵԱՆՔ

◆ Տաճկաստանում կառավարութիւնը փակել է բոլոր հնչակեան եւ դաշնակցական Մանաճիւղերը ակումբները եւ թերթերը, իսկ պարագլուխներին յանձնել զինուորական դատարանին մեղադրելով նրանց պետական դաւաճանութեան մէջ.

◆ Վանը հայերու կողմից գրաւելու ժամանակ թիւրքերը բանտի մէջ դաժանաբար մորթել են հնչակեան գործիչներ Ասօին (Տիգրան Օտեան), Աբրահամ Բրուտեանին, Արտաշէս Սօլօբեանին եւ Սաղաթեանին.

◆ Հայկական կամաւորների 6-րդ գունդը յունիս 24-ին առիթանով ընդհարւում է ուժեղ թշնամու թիւրք զօրքերի հետ եւ յաղթութիւն տանելով հրամանատար Գ. Աւշարեանցին. Կան նաեւ կամաւորներից սպանուածներ եւ վիրաւորներ.

◆ Բագուի Մարդասիրական ընկերութեան Նախագահ Հ. Տէր Միքայէլեանը Թիֆլիսի քաղաքագլուխ Ալ. Խատիսեանից ստացել է հետեւեալ հեռագիրը. «Գեներալ Ն. իր եւ իր զօրագնդի կողմից խնդրում է յայտնել կամաւորական խմբի հրամանատար Աւշարեանի բնակիչներին իրենց խորին ցաւակցութիւնը եւ յարգանքը նրա քաջութեան եւ արիութեան. Միացնում եմ եւ իմ զգացումներս».

◆ Բուլղարիա են ապաստանել Եւրոպական Թիւրքիայից մի քանի հազար հայ փախստականներ.

◆ Սոֆիայից (Բուլղարիա) մեզ հաղորդում են որ մօտ օրերս այնտեղ կսկսի լոյս տեսնել շաբաթը երկու անգամ մի նոր հայերէն թերթ „Բալկանեան Մամուլ" անունով Ս. Սապահ-Գիւլեանի խմբագրութեամբ.

◆ Աստրախանից գնացած հայ կամաւորների խմբապետ Հայկ Բժշկեանը, որը գտնւում էր հայկական կամաւորների 6-րդ գնդում իւր ցոյց տուած քաջագործութիւնների համար ստացել է պրապորշչիկի աստիճան եւ Ս. Գէորգի խաչ.



ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔ

◆ Վերջնականապէս վճռուած է Պետական Դումայի գումարը [illegible] իսկ 19-ին նոր սեսիան [illegible] կարող.

◆ Արդարադատութեան մինիստր Շչեգլովիտովը արձակուել է պաշտօնից.

◆ Պաշտօնից արձակուած Սինոդի օբեր պրոկուրոր Սաբլերին տեղ նշանակուած է Մոսկվայի ազնուականութեան պարագլուխ Սամարինը.

◆ Մտադրութիւն կայ Ռուսաստանում հիմնել, պրոֆէսոր Ռէյնի առաջարկութեամբ, ժողովրդի առողջապահութեան մինիստրութիւն.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿ ԳՐՈԶՆԻՑ

Վերջին երկու երեք տարում, երբ Գրոզնիյում նաւթային գործերը անհամեմատ աւելի առաջ գնացին՝ տեղումս եկւոր հայերի թիւր հասաւ մինչեւ 300 ի, չհաշուած ի հարկէ գործարանների բանւորներին.

Բազարի նիւթական դրութիւնը լաւացաւ, հետեւապէս եւ սկսեց վերաշինութիւնը. Նորոգւեցին հին շէնքեր, կառուցւեցին նորերը, այժմ էլ անագին աշխատանքներ են տեղի ունենում ազատելու համար փողոցները ցապատական ցեխից.

Սակայն, ցաւօք սրտի պէտք է նկատել, որ այդ բոլոր յառաջադիմութիւնը. հայերի, եւ այն էլ հարուստ դասակարգի աւելանալը տեղումս, զգալի եռանդուն գործունէութիւնը չը ցոյց տուեց ծխական դպրոցի շուրջը.

Այսպէս 1914—ուս. տարում ծխական հոգաբարձութիւնը դպրոցի ծախսերը ծածկելու համար 375 ր. պարտքի տակ է ընկել.

Երեւի Գրոզնեցիները կարծել են թէ երեք տարի սրանից առաջ Մանթաշեանների նւիրաբերած 1000 ր. ծախսւելուց յետոյ, դարձեալ մի բաղդով, կգտնուի մի դրսեցի բարերար որ կրկին անգամ հազարներ կնւիրի, որպէսզի գրոզնեցիներին ցարձել մի երկու տարի անգործութեան մատնէ.

Բայց ինչու.

Գրոզնեցիներն էլ գործում են.

Անցեալները ծխական ժողովում դրուած էր եկեղեցապատկան բնակարանի խնդիրը, որը տրուած է ծխատէր քահանային ազատ.

Հոգաբարձութիւնը աչքի առաջ ունենալով 1 որ ծխականների թիւր բաւական սուրացել է, որով եւ քահանայի ապրուստի միջոցները պէտք է համարել ապահովուած. եւ II-րդ որ դպրոցի օգտին նւիրաբերութիւնները այնչափ պակասել են, որ 1914—15 ուս. տ. 375 ր. դէֆիցիտ է ստացել՝ դիմել է քահանային ազատելու եկեղեցապատկան շէնքը, դպրոցի օգտին վարձու տալու դիտաւորութեամբ.

Քահանան ընդդիմանալով այս առաջարկութեան, պահանջում է ծխական ժողով գումարել.

Ժողովը տեղի ունեցաւ կիրակի մայիսի 31-ին, որտեղ ձայների մեծամասնութեամբ վճռեց քահանային շէնքել բնակարանից, այլ եւ ժողովեց 150 ր. գումար՝ եկեղեցւոյ բակում ծաղկանոց հիմնելու համար, իսկ հոգաբարձութեան 375 ր. դեֆիցիտը «Թող հոգաբարձուները՝ իրենց սեպհականութիւնները վաճառեն ու ծածկեն», ասա որոմնաւոր դիկավարի խելացի դատաւորական [illegible]ութիւնը.

Այս Գրոզնիյի հայ հասարակութեան գործունէութիւնը, որ քանի[illegible] խակ չի ազատւած միջնադարեան կրանաձութիւններից՝ դեռ չի գիտակցում դպրոցի ապահովման խնդիրը գերադասել՝ ծաղկանոցներ հիմնելուց առաջ.

Մ. ԱՍԼԱՄԱՋԵԱՆ.

Գրոզնի.

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՇԱԲԱԹԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Պատերազմական գործողութիւնները գերմանական ֆրոնտում մտել են նոր փուլի մէջ.

Լվովի գրաւումից յետոյ, փոքր դադար առնելով աւստրո-գերմանական միացած ոյժերը, կանգ չառնելով հակառակորդ կորուստների առաջ՝ ամեն կերպ աշխատում են առաջանալ Լիւբլինի եւ Խոլմ—Բրեստի ուղղութեամբ, հանդիպելով մեր բանակների ուժգին դիմադրութեանը. Գերմանիայի վայրկենաձե ծրագիրն է յարձակւելով իր ամբողջ ոյժերը ընկճեցնել Ռուսաստանը եւ ստիպել նրան անջատ խաղաղութիւն կնքել, սակայն մեր երկրի նիւթական եւ ֆիզիկական բնապաշարները այնքան մեծ են եւ անսպառ, որ Գերմանականի նման անմիջականները դատապարտուած են կատարեալ անյաջողութեան.

Արեւմտեան ֆրոնտում գերմանացիների կրած մի շարք խոշոր պարտութիւնները, ստիպեցին այս վերջիններին փորձել բազմաթիւ. կատաղի յարձակումների միջոցով վերադարձնել իրենց կորցրած դիրքերը, բայց ապարդիւն. Գերմանական բոլոր յարձակումները մեծ կորուստներով յետ մղւեցին դաշնակիցների կողմից.

Հարաւում Աւստրիայի բոլոր ջանքերին կենտրոնացնելու իտալական ֆրոնտում խոշոր ոյժեր վճռական ճակատամարտի համար, իտալացիք թէեւ դանդաղ, բայց շարունակում են առաջանալ դէպի Տրիենտ եւ Տրիեստ.

Դարդանելում դաշնակիցները՝ վերջերս նոյնպէս ունեցան մի շարք յաջողութիւններ հետզհետէ առաջանալով դէպի Պոլիս եւ Թիւրքական բանակը հալւում է կորցնում լրացնել իր նօսրացած շարքերը երկրի խորքերից բերած զօրամասերով.

Կովկասեան ֆրոնտում թիւրքերը անկարող լինելով հաշտուել Տաճկահայաստանի մի մասի կորստեան մտքի հետ, վերջերս կենտրոնացնելով բաւականին խոշոր ոյժեր փորձեցին անցնել յարձակողական գործողութիւնների, սակայն Դերիկի Շարիան դաշտ, Ալաշկերտի եւ Վանի կռիւներում չարաչար ջարդուելով ստիպուած եղան յետ նահանջել. Մինչեւ օրս ռուսական զօրքերը գրաւել են Տաճկահայաստանում մօտ 60,000 քառակուսի վերստ մէկ միլիոն ազգաբնակութեամբ.



Խմբագիր հրատարակիչ՝
ՎԱՀԱՆ ՂՈՒԿԱՍԵԱՆ
Ред.-изд. В. Гукасьянъ

Дозволено военной цензурой. Астрахань, Типо-литографія Т-ва „Печатн. Дѣла" Окуръ Апресянцъ и Винниковъ.